Արձանագրություն N 2-1

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/9 ծածկագրով ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 29.04.2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աղայանց
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Ղազարյան
Է. Առուստամյան
Ա. Նալբանդյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան
Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Ա. Հյուսիսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման օրվա և ժամի, ինչպես նաև՝ հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Մ. Աղայանց)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2026 թվականի ապրիլի 29-ին ժամը 10:00-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնման գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Ռիջիդ» ՍՊԸ	23 708 214	13 980 000	0	13 980 000
2	«Վահրամ Կնյազյան» ԱՁ		17 000 000	0	17 000 000

Մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ. հասցեն

(Մ. Աղայանց)

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցե	Կապի միջոց	Էլեկտրոնային փոստի հասցե
1	«Ռիջիդ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ գ. Գեղամավան 2-րդ փ. 3-րդ նրբ. 25 տ.	093 35 57 87	rigidalgroup@gmail.com
2	«Վահրամ Կնյազյան» ԱՁ	ք. Արթիկ, Բաղրամյան 1/2	096 10 10 20	systemsvava@gmail.com

3. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Մ. Աղայանց)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ և հրավերի 8.21 կետերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի 29.04.2026թ. պատճառաբանված որոշումը՝ հրավերով սահմանված N 1.3 Հավելվածի համաձայն մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց հարցում կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջինիս կողմից վերահսկվող եկամուտների գծով մասնակցի հարկային պարտավորությունների հանրագումարը (բոլոր հարկատեսակների մասով) 500 000 ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորությունների մասին:

3.2 Հայտերի գնահատման նիստը հրավիրել իրավասու մարմնի կողմից եզրակացությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:20-ին, ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Մ. Աղայանց

Անդամներ՝ ---------- Ն. Ղազարյան

---------- Է. Առուստամյան

---------- Ա. Նալբանդյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Նիկոլայան

ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/9 ծածկագրով ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

29.04.2026թ.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ և հրավերի 8.21 կետերը՝ հրավերով սահմանված N 1.3 հավելվածի համաձայն մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով հարցում կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջինիս կողմից վերահսկվող եկամուտների գծով մասնակցի հարկային պարտավորությունների հանրագումարը (բոլոր հարկատեսակների մասով) 500 000 ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորությունների մասին:

Գնահատող հանձնաժողովը մասնակիցների հայտերը գնահատելու է հիմք ընդունելով իրավասու մարմնի կողմից ստացված տեղեկատվությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Մ. Աղայանց

Անդամներ՝ ---------- Ն. Ղազարյան

---------- Է. Առուստամյան

---------- Ա. Նալբանդյան